

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ  
Վ. Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ  
Գ. Խաչատրյան

12 հունվար 2012 թ. N 3

### Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ N 3

#### 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (29.11.2011թ., ՀՕ-301-Ն, ուժի մեջ է 01.01.2012թ-ից) 6-րդ հոդվածի համաձայն (որով փոփոխություն է կատարվել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասում) ռեզիդենտի շահութահարկի կանխավճարների մուծումները կատարվում են յուրաքանչյուր եռամսյակ, նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի և (կամ) շահութահարկի հաշվարկային մեծության 18.75%-ի չափով՝ յուրաքանչյուր եռամսյակի վերջին ամսվա 15-ից ոչ ուշ:

Միաժամանակ՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.09.2009թ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2004 թվականի ապրիլի 2-ի N 1-05/7-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 2682-Ն հրամանով հաստատված շահութահարկի հաշվարկի (ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 08.04.2011թ. N 720-Ն և 05.09.2011թ. N 2060-Ն հրամաններով կատարված փոփոխությունների ամփոփ տարբերակ) [1500] տողում ցույց է տրվում հաջորդ տարվա կանխավճարների եռամսյակային գումարը՝ որպես 1501 և 1502 տողերի հանրագումարի 1/6-ի և 1503 տողի հանրագումար:

Ստեղծված իրավիճակում տարաբնույթ է ընկալվում «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի (29.11.2011թ., ՀՕ-301-Ն) վերը նշված դրույթը՝ 2011թ. հաշվետու տարվա համար 01.01.2012թ-ից հետո հարկային տեսչության մարմիններին ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկի [1500] տողի լրացման առումով:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասով, ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

Ռեզիդենտները 01.01.2012թ-ից հետո ներկայացվող 2011թ. հաշվետու տարվա համար շահութահարկի հաշվարկի [1500] տողում ցույց են տալիս հաջորդ տարվա կանխավճարների եռամսյակային գումարը՝ որպես 1501 և 1502 տողերի հանրագումարի 18.75%-ի և 1503 տողի հանրագումար: Ընդ որում՝ այն ռեզիդենտները, որոնք հաշվետու տարին ավարտել են հարկային վնասով (տող0500<0) կամ չեն ունեցել հարկվող շահույթը (տող0500=0), կամ որոնց հաշվետու տարվա փաստացի շահութահարկը չի գերազանցել 500,0 հազ. դրամը (տող1501+տող1502<500000 կամ տող1501+տող1502=500000), այդ տողը չեն լրացնում: